



Հունիս 1995

**ՀԱՅՔ Հաստատությունը սույն
տեղեկագրի միջոցով հրատապն-
կում է իր գիտահետազոտական-
ծրագրային աշխատանքների
արդյունքներն ու իր տարրեր
հանձնախմբերի ուսումնասիրու-
թյունների եւ տեսակետների քըն-
նարկման եզրակացությունները:
Տեղեկագրում տեղ են գտնում նաև
**ՀԱՅՔ Հաստատության հետ գոր-
ծակցող գիտահետազոտական հաս-
տառությունների ու անհատ
մասնագետների աշխատություն-
ները:****

**ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ
ԳՈՐԾՈՒԵՇՈՒԹՅՈՒՆԸ**

ՀԱՅՔ Հաստատության կոչումն ու նպատակը կայանում է հայ ազգային
գոյատեման եւ զարգացման համար ամենակենսական նշանակություն
ունեցող գաղափարները. կարիքներն ու խնդիրները ըմբռնելու, վերլու-
ծելու եւ դրա հիման վրա տարբեր բնագավառների ազգային ամենաբար-
ենապատ քաղաքականությունները առաջարկելու մեջ:

ՀԱՅՔ Հաստատությունը, իր սկզբունքի համաձայն, ազգային խնդիր-
ներին մոտենում է գիտական օբյեկտիվությամբ, համահայկական
շափանիշով ու հեռանկարով եւ բացարձակապես զերծ է որեւէ հատվա-
ծական շահագրգուվածությունից կամ ազդեցությունից:

ՀԱՅՔ Հաստատության գործունեության հիմնական մասը կազմում է՝
այ) Հայ ազգային ամենակենսական գաղափարների ու խնդիրների
բարձրացման, հստակեցման եւ դրանց գործնական լուծման համար՝
գիտահետազոտական ծրագրային աշխատանքների կատարումը, գործակ-
ցելով համապատասխան գիտահետազոտական հաստատությունների եւ
անհատների հետ:

բ) Այդ աշխատանքների արդյունքները հայության տարբեր հատված-
ներին, շրջանակներին ու խավերին մատչելի դարձնելը՝ տարբեր
մակարդակներով եւ ձեւերով:

ՀԱՅՔ Հաստատությունը հիմնադրված է, ղեկավարվում է կամ
աջակցություն է գտնում հայության ճակատագրով մտահոգ եւ կյանքի
այլազան բնագավառներում էական փորձառությամբ, տարբեր վայրերում
ապրող անձանց կողմից:

ՀԱՅՔ Հաստատությունը որեւէ ձեւով չի կապված, չի ազդված ու
առավել եւս չի ղեկավարվում որեւէ քաղաքական, պետական կամ այլ
նման կազմակերպության կողմից:

ՀԱՅՔ Հաստատությունը ազգային շահերին հետեւող, գիտահետազո-
տական ծրագրային բնույթի գործունեությամբ, շահույթ ստանալու
նպատակ չի հետապնդող, լիիվ անկախ ընկերակցություն է:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Տեղեկագրում ներկայացված են ՀԱՅՔ-ի փորձագետների թիվ 1 և 2 ծրագրերի ուղղությամբ կատարված աշխատությունները:

Թիվ 1 ծրագրով խնդիր է դրվում վերականգնել հայի տոհմիկ հարազատ կերպարը, որով նա կկարողանա ճանաչել իր ազգային հավատամքը, բարոյական արժեքները, որոնք միաժամանակ համամարդկային արժեքներ են, եւ կկարողանա դրանք կիրառել ամենօրյա կյանքում ամենական, ընտանեկան, ընկերային եւ ազգային հարաբերություններում:

Այս ծրագրով միաժամանակ շամքերն ուղղվում են բացահայտելու հայ ազգային գաղափարախոսության բաղկացուցիչ մասերը, բնորոշելու դրանց ունեցած պատմական դերը եւ վերասահմանելու՝ ազգը գետի 21-րդ դար առաջնորդելու կարողությամբ օժուված գաղափարախոսությունը որպես ազգային ինունիտեն՝ վարակամերժ կարողություն, համահայկական ազգապետության կառուցի շաղախ եւ ազգային կենսագործումների հիմք:

Թիվ 2 ծրագրով վերաբերում է հայության կառավարելիության կատարելագործմանը՝ չափանիշ ընդունելով ազգային կենսական շահերի օգտին հայության տարրեր բնագավառների ներուժի օգուագործման արդյունավետությունը: Սույն ծրագիրը ներառնում է նաև համայն հայության ազգային քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների հարցը, հաշվի առնելով ազգային եւ միջազգային տարրեր բնագավառների պայմաններն ու պահանջները:

Փիլիսոփայական գիտությունների դրւուր, պրոֆեսոր Ռաֆայել Սամանյանը «Ազգ եւ սեւուկանություն» հոդվածում նշում է, որ տեսության մեջ եւ քաղաքական պրակտիկայում ազգային շատ հիմնահարցերի լուծումը կախված է «ազգ» հասկացությամ սահմանումից եւ այլ հասարակական երեսույթների հետ նրա հարաբերակցությունից:

Լայն տարածում գտած այն տեսակները, որը նոյնացնում է ազգը եւ պետությունը, սիրալ է եւ շատ ազգերի համար ունենում է բացասական հետեւանքներ: Միջազգային հարաբերությունների համակարգի նման ըմբռնումը բացառում է սեփական պետականություն չունեցող ազգերի ինքնուրուշման իրավունքի իրականացումը՝ հարկադրելով նրանց անկախության համար պայքարել ազգային-ազատագրական պատերազմների միջոցով: Այդպիսի նոյնացումը նենգափոխում է ազգային պատկանելությունը քաղաքացիությամբ, ազգային լեզուն՝ պետական լեզվով, տանում է դեպի կախյալ եւ սակավաթիվ ազգերի գիտակցության, ազգային գաղափարախոսության, հայրենասիրության եւ ինքնատիպության այլ դրսերումների բացասումը:

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու Մանուկ Հարությունյանի «Ազգային գաղափարախոսությունը հետամրուղաւորության շրջանում» հոդվածում դիտարկվում են խորհրդային ամբողջատիրությունից ժողովրդավարության անցման պայմաններում ազգային գաղափարախոսության կազմավորման, գործառնության եւ զարգացման միտումները: Հատուկ ուշադրություն է դարձվել հայ ազգային պետականության կազմավորման եւ զարգացման գործում գաղափարախոսության դերի վերլուծությանը: Ընդ որում, ազգային գաղափարախոսության դերը դիտարկվում է մի քանի ուղղություններով: որպես հասարակության եւ ազգի կյանքի սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, բարոյական գործառնությունների վրա գաղափարազարդարական ներգործությունը ուժեղացնող, որպես հասարակության արդիականացման սոցիալական վճարները չեղողացնող եւ որպես մարդկանց հոգեբանության եւ վարքի մեջ ամբողջատիրական շերտանատվածների վերացմանը եւ հայերի նոր քաղաքական հոգեկերտվածքի ձևավորմանը նպաստող գործոն:

Ներկայացված աշխատությունները ավելի մասնամաս կը նարկվեն սույն թվի աշնանը կայանալիք գիտական նախաշրջանում:

ԱԶԳ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազգը եւ պետականությունը իրական կյանքում գտնվում են այնպիսի սերտ փոխադարձ կապերի մեջ, որ նրանց անբաժանելի միասնությունը թվում է ակնհայտ, ապացույցներ չպահանջող ճշմարտություն: Սակայն ուսումնասիրություններից պարզվում է, որ գոյություն ունեն այդ կապերի հաճախ իրարամերժ մեկնաբանություններ, որոնք հետեւանք են ազգ հասկացության տարբեր սահմանումների: Այսաեղ թերեւս ավելի քան որեւէ այլ հարցում դրսետրվում է տեսության ու պրակտիկայի փոխադարձ կապը, եւ ազգի սխալ սահմանումը քաղաքական պրակտիկայում տանում է դեպի բացասական, նույնիսկ ողբերգական հետվանքների: Նման օրինակներով լի են թե՝ անցյակի պատմությունը, թե՝ ժողովուրդների արդի կյանքը:

Ազգի սահմանման հարցում գոյություն ունեն տարբեր մոտեցումներ: Հանրության այդպիսի բարդ կառուցվածքի ոչ ամբողջական ըմբռնման դրսետրումն է նաեւ այն պնդումը, թե ազգ հասկացությունը մտացածին է եւ արտացոլում է այնպիսի փոփոխական ու հեղիեղով երեսոյթ, որի սահմանումը հենց այդ հատկությունների պատճառով հստակ ձեւակերպել հնարավոր չէ: Անշուշտ, ազգի սահմանումը ձեւակերպելիս երեւան են գալիս որոշակի դժվարություններ, կապված այն իրողության հետ, որ ազգերը ձեւափորպում են տարբեր դարձրջաններում, հասարակական-տնտեսական, մշակութային զարգացման, ինչպես նաև էթնիկական, կենցաղային, քաղաքական կազմակերպվածության բազմազան ձևերի առկայության ու տարաբնույթ այլ պայմաններում: Բայց պնդել, թե ազգը առասպել է, նշանակում է ոչ միայն կանգնել հակազգային հողի վրա, այլև ընդհանրապես պոկվել ամեն մի հողից, խճճվել ոչ իրական, վերացական կոսմոպոլիտական դատողությունների մեջ:

Այն, որ նման պատկերացումները սնամեջ են, հեշտությամբ կարելի է ապացուցել՝ անդրադասնալով ազգային-ազատագրական շարժումներին եւ ողբերգական իրադարձություններով լի ազգամիջյան բախումներին:

Ազգի՝ որպես որոշակի իրողության բացասումը ոչ միայն կոպիտ տեսական սխալ է, այլև վտանգավոր գաղափարախոսական դրույթ, որը վնաս է բերում ամենից առաջ ինքնակայության ու անկախ գոյության համար պայջարող ազգերին:

Եվս մի սխալ մոտեցում, որը նույնապես հետեւանք է ազգ հասկացության բովանդակության նենագափոխման՝ փաստորեն ազգը փոխարինվում է նրա առանձին գործոնով կամ հասկությամբ: Ազգը պաւամականորեն ձեւավորված բարդ իրողություն է, ունի հատկությունների մի ամբողջ համակարգ եւ անխօնելիորեն կապված է մի շարք հասարակական երեսությների հետ: Դրանց թվում են բնատարածությունը, էթնիկական ծագումը, պատմական ծակատագրի ընդհանրությունը, պետականությունը, լեզուն, կենցաղային ու հոգեւոր մշակությը, ազգային ինքնազիտակցությունը, հոգեբանական ընդհանրությունը եւ այլն:

Այդ բոլոր գործոնները ունեն կարեւոր նշանակություն ազգի՝ որպես որակական որոշակիության ձեւավորման ու գոյատեսության համար: Բայց որքան էլ կարեւոր լինեն դրանք, անթույլարելի է ազգի նույնացումը որեւէ մեկ կամ մի քանի առանձին գործոնների կամ հատկությունների հետ: Օրինակ, էթնիկական խմբերի միատեղ բնակեցման տարածքը ազգի ձեւավորման ու գոյության անհրաժեշտ նախապայմանն է: Սակայն իր ծագումից հետո ազգը կարող է տեղափոխվել կամ սփռվել այլ տարածքներում պահպանելով իրեն որպես ազգ: Դարերի ընթացքում տեղի ունեցած ժողովուրդների գաղթը թույլ չի տալիս բացարձակ ճշգրտությամբ բնորոշել բուն ազգային տարածքները, որոնք այնուամենայնիվ ամրապնդվում են ազգերի գիտակցության մեջ իբրև ազգային հատկանիշներից մեկը ու միավորման գործոն են ազգերի համար՝ ամրակայվելով «հայրենիք» հաս-

կացության բովանդակության մեջ:

Ժամանակակից ազգերի մեծամասնությունը բաղկացած է քազմաթիվ միաձուլված էթնիկական խմբերից, բայց ազգային գիտակցության մեջ ծագման ընդհանրությունը արմատավորվել է որպես կարետրագույն համկություններից մեկը: «Ենց այդ պատմառով էլ չի կարելի հանգեցնել ազգ հասկացությունը էթնիկական ծագմանը, ոչ էլ թերագնահատել այդ գործոնը որպես ազգային գիտակցության փաստ:

Ազգի կարետրագույն համկություններից մեկը լեզուն է: Բայց անթույլապելի է բացարձակացնել այն ու նոյնացնել ազգին: Մի կողմից, լեզուն ազգի ձեռավորման անփոխարինելի գործոնն է, նրա պատմական հիշողության, հոգեկան արժեքների համակարգի, գիտակցության ու ինքնագիտակցության կուտակիչը, իսկ մյուս կողմից, որպես նշանների համակարգ, այն կարող է փոխարինվել մի այլ լեզվով: Ազգ եւ ազգային լեզու հասկացությունների նոյնացումը կամա թե ակամա հանգեցնում է անցանկալի հետեւանքների: Օրինակ, նման մոտեցման դեպքում հայ ազգի կազմից պետք է հանել միլիոնավոր հայերի, որոնք պատմական դաժան ճակատագրի հարկադրմամբ չեն տիրապետում իրենց ազգի լեզվին: Անշուշտ, պետք է ճգնել ամեն ինչ, որպեսզի աշխարհի բոլոր հայերը տիրապետեն ազգային լեզվին, սակայն դա հարցի մյուս կողմն է: Այժմ, ազգային անկախ պետությունը վերականգնելուց հետո, ընդլայնվում են այդ խնդրի լուծման հնարավորությունները:

Համանման դատողություններ կարելի է անել նաև ազգային մշակութիւն վերաբերյալ: Զկա ու չի կարող գոյություն ունենալ որեւէ ազգ, որ չունենա իր մշակութն, ուր արտացոլվում են ազգի պատմությունը, ապրելակերպը, բնավորության ու հոգեբանական առանձնահատկությունները, թանձրանում են ազգային գիտակցությունն ու ինքնագիտակցությունը: Բայց մշակութն իր բնույթով ենթակա է փոփոխությունների, որոնք տեղի են ունենում ուրիշ մշակութների ազդեցությամբ: Մշակութը զար-

գանում է ոչ մեկուսացած, շատ բան է փոխառնում այլ ազգերի մշակութներից՝ միաժամանակ պահպանելով իր ազգային ինքնատիպությունը: Սխալ է ազգ հասկացությունը հանգեցնել նաև մշակութին թեկուզ այն պարզ պատճառով, որ ազգը մարդկային խոսք է, իսկ մշակութը՝ այդ խմբի գործունեության ձեւ:

Վերջին մեկուկես դարերի ընթացքում գրեթե բացարձակ ճշմարտություն է համարվել ազգի այն սահմանումը, որով նա հանգեցվում է պետականության: «Ետապոտողների տեսական աշխատանքների բացարձակ մեծամասնության մեջ ազգը նոյնացվում է պետության հետ: Ազգի այդպիսի սահմանման վրա է հիմնված միջազգային հարաբերությունների ամբողջ քաղաքական պրակարիկան: Չժխտելով, որ նման ըմբռնումը լուրջ հիմքեր ունի ազգի ու պետության փոխադարձ կապի հենց բնույթի մեջ, մենք պնդում ենք, որ ազգը ու պետականությունը նոյնական հասկացություններ չեն եւ որ այդ հասկացությունների նոյնացումը տեսականորեն սխալ է ու քաղաքականապես վնասակար շատ ազգերի համար:

Ազգերի ձեռավորման ընթացքը սկսվել է մարդկության պատմության հենց ակունքներից: Այդ փաստը նշել են ազգագրագետներից, փիլիսոփաներից, հասարակագետներից շատերը, այդ թվում նաև Գարեգին Խաչաղը: «Ազգությունը, - գրել է նա, - կարելի է ասել համարյա թե նոյնքան իին է, որքան մարդկությունը» (ԷՇ է ազգությունը: Պեյրութ, 1974, էջ 21): Ազգերի ծագման հետ զուգահեռաբար ընթանում էր պետականության ձեռավորումը: Մարդկությունը տակավին իր գոյության սկզբից բաժանված է եղել որոշակի խմբերի: Այդ խմբերը տարբերվում էին միմյանցից նաև այնպիսի յուրահատկություններով, որոնք բնորոշվում են որպես ազգային ու դրսետրվում են այնպիսի երեսութերում, ինչպիսիք են ազգային լեզուն, կենցաղը, սովորութերու, ծիսակամարությունները, արվեստը, հոգեբանությունը, ինքնագիտակցությունը եւ այլն: Դրա հետ մեկտեղ, մարդկային ոչ մի խումբ չէր կարող գոյություն ունենալ

առանց դեկավարման որոշակի համակարգի, առանց պոտեստար (քաղաքական) կազմակերպությունների: Դրանք միմյանցից տարբերվում էին միայն դեկավարման ձևերով, որոնք համապատասխանում էին ավալ խմբերի առանձնահատկություններին ու նրանց առջեւ կանգնած կենսական խնդիրներին: Օրինակ, եթե հնադարյան ընտանիքի կամ տոհմի դեկավարությունը ապահովում էր նրա նահապեած կամ առաջնորդը, ապա ցեղի, առավել եա՝ ցեղերի միության կառավարումը պահանջում էր ավելի բարդ պոտեստար կազմակերպություն, որը սկզբունքը են կատարում էր նոյն ֆունկցիան, ինչ կատարում է ժամանակակից պետությունը:

Այսպիսով, մարդկությունը կարող է գոյություն ունենալ միայն հասարակական խմբերի ձետվ, որոնք առանձնանում են իրենց տարբերիչ հատկություններով, այդ թվում նաև ազգային համալիր հատկություններով: Միեւնոյն ժամանակ այդ խմբերը որոշակի ձետվ կազմակերպված են ու դեկավարվում են, այսինքն՝ ունեն համապատասխան պոտեստար կազմակերպություններ: «Ենց այդ օրգանական անբաժանելիությունը եւ ազգային ընդհանրությունների ու քաղաքական դեկավարման մարմինների ձեւավորման ընթացքի միաժամանակությունը հիմք հանդիսացան ազգի ու պետության նույնացման համար: Ինչպես ել ազգի ձեւավորումը ընթանա՝ տարաբնույթ էթնիկական խմբերի միաձուման թե հակառակը՝ հիմնական էթնիկական կորիգից առանձին խմբերի անջատման ուղիներով, միեւնոյն է ազգերի ձեւավորման ընթացքը չեր կարող տեղի ունենալ պոտեստար կազմակերպություններից անկախ: Լինեն դրանք հնադարյան ցեղերի առաջնորդների խորհուրդների, անտիկ քաղաք-պետությունների, ինչ կայսրությունների, միջնադարյան նախարարությունների ու միապետությունների, թե արդի պետությունների մակարդակով, բոլոր դեպքերում ազգերի ծագման ընթացքն ու նրանց գոյատեւթյունը շատ բաներով պայմանավորվում են պոտեստար կազմակերպությունների գործունեու-

թյամբ: Այդ գործունեության արդյունքները կախված են այն բանից, թե ինչպիսի՞ն է նրա ուղղվածությունը եւ ազգային ո՞ր խմբերի շահերն են այն արտահայտում:

Պետության գլխավոր ֆունկցիաներից մեկը որոշակի տարածքում ապրող տարբեր էթնիկական խմբերի միավորումն է մի ընդհանրության մեջ, նրանց համախմբումը որպես ամբողջություն, այսինքն, ազգերի ձեւավորման ընթացքի ապահովումը: Որոշ դեպքերում այդ գործունեությունը հաջողությամբ է պսակվում եւ նրա արդյունքը լինում է նոր ազգերի ծագումը: Այդ է տեղի ունեցել թե՛ ինչ ազգերի հետ, ինչպիսիք են հայերը, պարսիկները, հրեաները, հույնները եւ ուրիշները եւ թե՛ արդի եվրոպական ազգերի մեծամասնության հետ, որոնք ձեւավորվել են միջնադարում տարբեր էթնիկական խմբերի միաձուման ձանապարհով: Նման երեսությներ առկա են նաև նոր դարաշրջանում, մասնավորապես Կենարունական ու Հարավային Ամերիկայի երկրներում, այժմ ել դրանք շարունակվում են մի շարք այլ երկրներում:

Սակայն դրա հետ մեկտեղ պոտեստար կազմակերպությունների գործունեության արդյունքը ոչ միշտ է, որ ավարտվում է նոր ազգերի ձեւավորմամբ: Օրինակ, Հին Հռոմը եւ մի շարք այլ կայսրություններ մնում են տարբեր էթնիկական խմբերի խառնակույթի ձետվ եւ փլուզվում են պատմական ցնցումներից, չդառնալով նոր ազգի ծագման միջոց:

Դրան արժե ավելացնել, որ պետության ազգաձեւավորման ֆունկցիան միշտ չէ, որ դրսեւրովել է միավորող գործունեությամբ: Պատմությունը լի է օրինակներով, երբ ազգերը ձեւավորվել են կենտրոնախույս, անշատղական գործունեության հետեւածքով: Այն ազգերը, որոնք ծգտում են անշատվել ու ձեռք բերել քաղաքական անկախություն, ստեղծելով իրենց կառավարման կառուցվածքները, պայքարում են հասնելու դրանց ճանաչմանը միջազգային ընկերակցության կողմից: Այդպես է եղել Հնդկաստանից Պակիստանի ու Բանգլադեշի անշատումը, Հարավալա-

Վիայի ու ԽՍՀՄ-ի քայլայումից մեզ հայտնի մի շարք պետությունների առաջացումը եւ այլն:

Այդ բոլոր փաստերը կարուկ հերքում են լայն տարածում ստացած այն անսական սխեման, որը նոյնացնում է ազգ ու պետություն հասկացությունները: Ազգը եւ պետությունը տարբեր կարգի երեսուցներ են, չնայած կապված են միմյանց անբաժանելի կապերով: Ազգը կենդանի իրողություն է, մարդկային խումբ, իսկ պետությունը՝ կառավարման կառուցվածք, մարդկային խմբերի քաղաքական կազմակերպվածության ձեւ, որը որոշակի պայմաններում կարող է դառնալ ազգերի ձեռավորման, իսկ այլ դեպքերում՝ նրանց քայլայման ու ոչնչացման գործիք, կարող է հանդես գալ թե՝ որպես ազգերի շահերի պաշտպան եւ թե՝ որպես նրանց գլխավոր թշնամի:

Ազգի ու պետության նոյնացման սխալն էլ ավելի ակնհայտ դառնում, եթե դիմում ենք քաղաքական պրակտիկայում ծանր հետևանքների հասցրած պատմական փաստերին:

Եթե հետազոտողները ասում են, թե «ազգը կառավարություն է» (Croce B. Elementi di Politica. Bari, 1925, p.14), կամ «ժողովուրդ է, որը ունի պետություն» (Deutsch K. Nationalbildung—Nationalstaat—Integration. Dusseldorf, 1972, S.204), նրանք բացահայտորեն նկատի ունեն արդի պետությունները:

Օտառ Բառերը իր «Ազգային հարցը եւ սոցիալ-դեմոկրատիան» գրքում, որով իմք դրեց ազգային պրոլետատիկային նվիրված հետագա բոլոր տեսական սխեմաներին, ազգի ծագումը կապում է այն պետության հետ, որը ձեռավորվել է զարգացած կապիտալիզմի դարաշրջանում: Եթե համաձայնվենք այդ տեսակետի հետ, ապա ինչպես վարվել, օրինակ, հայերի ու պարսիկների հետ, որոնք հազարամյակներ առաջ, մինչեւ արդի եվրոպական ազգերի ու պետությունների ծագումը, ունեցել են իրենց հզոր պետությունները: Համաձայն այդ «տեսության», նրանք չեն կարող ազգ համարվել, ինչը բացարձակ անհեթեթություն է:

Որոշ ազգեր բազմադարյա պատմության ընթացքում կորցրել են իրենց պետականությունը, օրինակ, հայերը, հրեաները: Ելնելով նշանակած սխեմայից՝ մինչեւ սեփական անկախ պետությունների վերականգնումը նրանք չեն կարող ազգ կոչվել: Հենց այդ էին պնդում որոշ տեսարաններ ու քաղաքագետներ, որոնք հրեաներին ոչ թե ազգ, այլ մշակութակրոնական հանրություն էին համարում: Հասկանալի է, որ նման չափանիշները ոչ մի ընդհանրություն չունեն իրականության հետ եւ հանգեցնում են ազգային խտրականության հաստատմանը:

Էլ ավելի անհանդուրժողական դիրք է ընդունում ազգի ու պետության նոյնացման տեսությունը այն ազգերի նկատմամբ, որոնք պատմական հանգամանքների պատճառով չեն ստեղծել ժամանակակից պետականության ձեռներից որեւէ մեկը: Այժմ աշխարհում կան մի քանի տասնյակ էթնիկական խմբեր, որոնք չպետք է կոչվեն ազգ եւ օգավեն նրա քաղաքական իրավունքներից միայն այն պատճառով, որ չունեն սեփական պետական կառույցներ: Նման վիճակը փաստորեն բերում է ազգերի ինքնորոշման իրավունքի ժխտմանը, քանի որ նման իրավունքը պայմանավորվում է ձանաշված անկախ պետականության գոյությամբ: Ստեղծվել է մի կախարդական շրջան, այն ազգերը, որոնք չունեն իրենց պետականությունը, զրկված են ինքնորոշման իրավունքից, մինչեւ պետություն չունեցող ազգային այդ խմբերը քաղաքական անկախության իրավունքի կարիք ունեն:

Ելնելով այդ իրողությունից՝ ճիշտ կիներ իրագործել որոշ փոփոխություններ միջազգային կազմակերպությունների կառուցվածքի մեջ: Մասնավորապես, նպատակահարմար է Միավորված ազգերի կազմակերպությունը վերանվանել Միավորված պետությունների կազմակերպություն, որը կհամապատասխանի այդ իիմնարկի եռթյանը: Միաժմանակ անհրաժշտ է ստեղծել ազգերի այնպիսի համաշխարհային կազմակերպություն, ուր ներկայացված լինեն իրենց ինքնորոշյունը հաշակած բոլոր ազգային խմբերը եւ այդ կազմակերպությանը

ընձեռել ազգերի իրավունքների ու շահերի պաշտպանության համար բոլոր իրական միջոցները: Այդ կազմակերպության համար պետք է ստեղծել այնպիսի պայմաններ, որ նա ի վիճակի լինի կանխելու ազգամիջյան կոնֆլիկտները: Ժամանակին Կառլ Ռենները գրել է. «Գլխավոր խնդիրն այն է, որ ժողովուրդները դառնան իրավական դեմքեր: Ազգային հարցը անհնար է լուծել, եթե այստեղ, որոշիչ կետում, ազգը նորից, ինչպես անցյալ 50 տարում, փոխարինվի «Թագավորական հողերով»: Ազգը պետք է սահմանվի ոչ թե որպես տարածքային միավոր, այլ որպես անհատների միակցություն, ոչ թե որպես պետություն, այլ որպես ժողովուրդ» (Государство и нация. СПб, 1906, с. 21, 31): Նժրախտարար, այդ չափազանց կարեւոր միարը ուշադրության չի արժանացել, ինչել է որպես ձայն բարբառ հանապատի: Ինարկե, այժմ էլ նման հարցադրումը անիրազորդելի խնդիր է, բայց սիալ կինի, եթե թեկուզ անսականորեն, այսօր այդ հարցը անտեսվի:

Միջազգային հարաբերությունների ստեղծված համակարգը պետականություն չունեցող ազգերին անկախություն ձեռք բերելու որպես միակ հնարավորություն թողնում է ազգային-ազատագրական պայքարը, որը ճանաչված պետական ու տարածքային շրջանակներում հանգեցնում է ազատագրական պատերազմների:

Զգտելով կանխել զինված ազգամիջյան բախումները՝ միջազգային կազմակերպությունները այդ նպատակին չեն հասնում ու չեն կարող հասնել, քանի որ, հռչակելով ազգերի ինքնորոշման իրավունքը, միաժամանակ չեն նախատեսել դրա իրագործման ու ազգամիջյան բախումների կանխման գործուն մեխանիզմներ: Այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են ՄԱԿ-ը եւ ուրիշներ, զբաղվում են միջազետական հարաբերությունների կարգավորմամբ, իսկ ազգային-ազատագրական պատերազմների հարցում փաստորեն անզոր են: Ազգային-ազատագրական պայքարի դրսեւորումների մեծամասնությունը դիմավում է որպես

անօրինական. որպես հաստաված պետական սահմանների խախտում, անկախ այն բանից, թե ինչպես են դրանք հաստավուել՝ ազգամիջյան հարաբերությունների խաղաղ զարգացման, ժողովուրդների միջեւ հոժարակամ քաղաքական պայմանավորվածության, թե բռնության, ազրեսիայի, խարեւության, ավելի ուժեղ պետությունների քաղաքական դաշտադրության միջոցներով: Օրինակ, Լեռնային Ղարաբաղի (Արցախի) հայերի ազգային-ազատագրական պայքարը: Հայտնի է, որ Արցախը բռնությամբ է մացվել «Սովետական Աղրբեջանի» կազմի մեջ, բայց նրա հռչակած անկախությունը օրինական չի համարվում նաև այսօր միջազգային կազմակերպությունների կողմից: *

Ազգի ու պետության նոյնացումը տանում է ազգային շատ կարեւոր առանձնահամակարգությունների նենագափոխմանը պետական հատկանիշներով, հետին պլան է մղում եւ նոյնիսկ ընդհանրապես բացառում է ազգային գործունները: Օրինակ, բազմազգ շատ երկրներում, որտեղ նոյնացվում է մարդկանց ազգային ու քաղաքացիական պատկանելությունը, պարարա հող է ստեղծվում ազգային փոքրամասնությունների ծովման եւ դրմինանա ազգերի իշխանության ամրապնդման համար: Դժվար չէ տեսնել այն պնդման քաղաքական ուղղածությունը, ըստ որի ԽՍՀՄ-ում, Սիրիայում, Իրանում եւ այլ երկրներում ապրող հայկական ծագում ունեցող քաղաքացիները չեն կարող հայ համարվել (Этнические процессы в современном мире. М., 1987, с. 10):

Աշխարհի տարբեր երկրներում այժմ բնակվում են հինգ միլիոն հայեր, ուստի նման հարցադրումը փաստորեն նշանակում է հայության թվի ավելի քան կիսով չափ կրծատում, ինչը յուրովի ցեղասպանություն է մեր ազգի նկատմամբ:

Ազգը պետականության հանգեցնելը բազմազգ երկրների պայմաններում տեղ չի թողնում շատ ազգերի ինքնակայության՝

* Հանային Ղարաբաղի հիմնախնդիրի որոշ իրավաքաղաքական հարցեր: Հողածաների ժողովածու: Հայկական համարագիտարանի գյուղավոր իմրազություն, ՀԱՅՔ հաստատություն, Երևան, 1994:

ազգային գիտակցության, գաղափարախոսության, հայրենասիրության ու ազգային ոգու այլ դրսետրումների համար, քանի որ քաղաքական ու հոգետը բոլոր ոլորաներում իշխում են դոմինանա ազգերի գաղափարները, հայացքները, պատկերացումները, որոնք պետականի պատրվակով փաթաթվում են ճնշված եւ կախյալ ազգերի վզին: «Իրավի, ի՞նչ հայրենասիրության մասին կարող է խոսք լինել, եթի այդ երկրներում իրավագործկ ու ճնշված ազգային խմբերի կողմից իրենց ազգի նկատմամբ տածած սերն ու նվիրվածությունը զնահատվում են որպես ազգայնամոլություն, այսինքն՝ այլ ազգերի բացասական ըմբռնում: Բայց չէ որ «հայրենիք» հասկացությունը չի կարող գոյություն ունենալ առանց ազգային գիտակցության, ազգային պատկանելության ու ազգային զգացմունքի: Նախկին ԽՍՀՄ-ում հնարած «փոքր հայրենիք» ու «Հայրենիք» մեծատառով հասկացությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ ազգային ու պետական գործուների նույնացումից առաջացած հակասությունների լուծման մի անհաջող փորձ:

Ազգայինը ու պետականը լրիվ չեն համընկնում ոչ մի երկրում, քանի որ իրականում բոլորն եւ ունեն ազգային փոքրամասնություններ, որոնք մի շարք հարցերում հակասության մեջ են մտնում պետության հետ: Դա լրացուցիչ ապացուց է այն բանի, որ ճիշտ չէ նույնացնել ազգը ու պետությունը:

Ազգի ու պետության հարաբերակցությունը շատ բանով պայմանավորված է պատմական զարգացման առանձնահատկություններով, ազգերի մոտ պետական իշխանության մասին ստեղծված պատկերացումներով: Մի բան է, եթի պետությունը բացարձականացվում է, եթի այն հանդես է գալիս ժողովրդի տիրոջ դերում: Այդ դեպքում ազգի ու պետության միջեւ վախի ու անվատականության հետևանքով առաջ է գալիս օտարացում: Այլ բան է, եթի բնականոն զարգացման ընթացքում ծնված պետությունը իրագործում է իր բնույթին հատուկ ֆունկցիաներ, այն է՝ քաղաքացիների կյանքի եւ ունեցվածքի պաշտպանում,

իրավակարգի, երկրի անվանգության, տնտեսության, կրթության, մշակույթի, արվեստի զարգացման ապահովում եւ այլն: Հասկանալի է, որ իրականում անաղարտ վիճակում չեն հանդիպում ոչ մեկը եւ ոչ ել մյուսը, բայց այստեղ խոսքը վերաբերում է միտումին, իդեալին, որը ձեւավորվելով ազգի գիտակցությունում, դետերմինացնում է պետության նկատմամբ նրա վերաբերմունքը:

Պետության ձեւավորումը եւ նրա հարաբերությունները ժողովրդի հետ միանշանակ եւ ուղղագիծ չեն: Անշուշա, վերջին հաշվով ժողովուրդն է ստեղծում պետությունը իրեն կյանքը կարգավորելու եւ կենսական պահանջները բավարարելու նպատակով, բայց դա շատ բարդ ու միջնորդավորված գործընթաց է: Ճիշտ չի լինի բավարարվել պարզ բանձետված, որի համաձայն ժողովուրդները ստեղծում են իրենց պետությունները՝ համապատասխան իրենց իդեալական պատկերացումների: Նախ, պատմականորեն պետականության կազմավորումը իրականացվում էր ոչ թե գիտակցված, այլ առավելապես տարերային եղանակով: Ամեն մի նոր սերունդ գտնում է կառավարման որոշակի ձևեր, դրանք ընթանում է որպես ընդմիշտ տրված, անփոփոխ եւ, նույնիսկ, իդեալական կառուցվածքներ: Դավիթ Հյումը նշում էր, որ ժամանակն, աստիճանաբար ազդելով մարդկանց հոգու վրա, հաշտեցնում է նրանց ամեն մի իշխանության հետ ու վերաբրում է վերջինին արդարացի եւ խելացի իշխանության բնույթ (Դ. ՅՈ. ԾՕ. Տ. 2-ի 2-րդ հատված, 1966):

Այսուհետեւ, առաջանալով, պոտեստար կազմակերպությունները ձեռք են բերում որոշակի ինքնուրույնություն, որը հաճախ հասնում է այն աստիճանի, որ սարկացվում է ժողովուրդը, որի ծնունդն է եւ որին կոչված է սպասարկել պետությունը:

Քազմաթիվ պատմական օրինակներ վկայում են, որ հաճախ իդեալից շատ հեռու, անգամ բռնակալական պետությունները ընկալվել են ժողովրդի կողմից որպես արդար ու խելացի պետություններ: Եթի իին եգիպտացիները ասավածացնում էին

փարավոններին, նրանց նոյնացնելով Արեւ-ասածո հետ, նրանք պատկերացում չունեին որեւէ ուրիշ պետական կառուցվածքի մասին, եւ այդ իսկ պատճառով գոյություն ունեցող պետությունը իր նկատմամբ որեւէ կասկած չէր առաջացնում: Այդորինակ մուտքում ունեն տիբերցիները, որոնց համար աշխարհիկ ու հոգետր իշխանությունը մարմնավորված է Դալայ-լամայի կերպարի մեջ, իսկ, Եվրոպական իմաստով, ժողովրդավարությունը՝ Վերացական, ոչ մի իմաստ չրովանդակող երետոց է:

Այս խնդրի առնչությամբ կա մի շատ կարեւոր ու բարդ հարցեա. որքանո՞վ է ազգը կամ բազմազգ ժողովուրդը պատասխանատու տվյալ պետության գործունեության համար: Երբ գերմանական ազգի մեծամասնությունը խանդավառությամբ հետեւց ֆոշիստական իշխանությանը, նա համոզված էր, որ դա լավագույն պետական համակարգն է: Նույնը կարելի է ասել ուստի եւ այլ ժողովուրդների մասին, որոնք մոլորության մեջ էին ընկել, հավատալով համայնավարական գաղափարներին ու պաշտպանելով բոլշևիկյան կառավարությունը: Այդ տեսակետից կարելի է խոսել գերմանական ու խորհրդային ժողովուրդների պատասխանատվության մասին՝ իրենց պետությունների գործունեության համար:

Դեռության ծեավորման ու նրա գործունեությանը մասնակից լինելու, հետեւարար, նաեւ ժողովորի պատասխանատվության աստիճանը աճում է ժողովրդավարության զարգացման, ժողովորդի գիտակցության ու մշակութային մակարդակի բարձրացմանը գուգընթաց: Արդի նոր պետությունների մեծ մասը հասարակաթագարական կազմակերպությունների գիտակից գործունեության արդյունք է: Նոր պետություններ ստեղծող ուժերը հետափորություն ունեն հաշվի առնելու պետականության կառուցման պատմական փորձն ու ներկայիս միջազգային պրակտիկան: Այսպես ընդլայնվում է այդ պետությունների գործունեությունը ժողովրդի իրական պահանջներին ու նրա իդեալական պատկերացումներին համապատասխանեցնելու հավանականությունը:

Թե որքանով է այդ հաջողվում՝ կախված է իրական պայմաններից ու կոնկրետ քաղաքական գործունեությունից:

Հայերի պատկերացումը պետականության մասին, անշուշան եա պայմանավորված է պատմական փորձով: Հայերը աշխարհում առաջիններից էին, որ ստեղծեցին իրենց ազգային պետությունը: Հայկական պետությունը տարբերվում էր շատ ուրիշ բազմազգ պետություններից, որոնք ծեավորվել էին որպես մի ժողովրդի կողմից մյուսների նկատմամբ իշխանություն հաստատելու գործիք: Հայկական ազգային գիտակցության մեջ պետական իշխանության մասին պատկերացումը ծեավորվել է ոչ որպես գերազագային ուժի, որի առջեւ ժողովրդը միայն չնշին փոշի է, զոհասեղանի հյութ, այլ մի հասարակական մարմնի, որը կոչված է պաշտպանելու երկրի քաղաքացիների կյանքն ու շահերը: Հայերի ավանդական պատկերացմամբ պետությունը գոյություն ունի ժողովրդի համար, այլ ոչ թե հակառակը:

Անկախությունը կորցնելուց հետո փոխվել է հայերի վերաբերմունքը պետականության նկատմամբ: Օտարերկրյա զավթիչների բազմադարյա իշխանությունը չէր կարող արտացոլում չատանալ ազգային գիտակցության մեջ. օտար իշխանությունը թշնամական վերաբերմունք առաջացրեց ազգի մեջ, որը ժամանակի ընթացքում զանգվածային գիտակցության մակարդակով վերածվեց բացասական վերաբերմունքի ամեն մի իշխանության նկատմամբ: Դա, ի միշի այլոց, որոշ պատմաբանների ու գրողների հիմք տվեց դատողություններ անելու հայ ազգի կողմից պետական մտածողության կորսակի մասին: Այժմ հայերը վերածել են իրենց ազգային պետականությունը եւ դա, իհարկե, մղում է պետականության նկատմամբ նոր վերաբերմունքի ծեավորման, պետական մտածողության ամրապնդման՝ ազգային գիտակցության բոլոր մակարդակներով:

Հայ ազգի վերաբերմունքը իր նորանկախ պետության նկատմամբ կախված է նրանից, թե ինչպիսին կլինի այդ պետությունը, ինչ չափով նա կարտահայտի ազգի կենսական շահերը եւ

կիամապատասխանի իդեալական կառավարման մասին նրա պատկերացումներին: Իհարկե, ինարավոր չէ որպազծել նոր պետական կառուցվածքի բոլոր հայտաճիշներն ու առանձնահատկությունները, որոշել, թե որքանով են դրանք համընկնում ազգի սպասելիքներին: Սակայն մի բան կարելի է հաստատել. դա չի կարող լինել բռնակալական պետություն: Դրան կդիմադրեն ազգի պատմական իիշողության մեջ ամրակայված բազմադարյա անկախության համար տարվող պայքարում ծնված համոզմունքները, հայերի ավանդական ազատասիրությունը, որը միշտ է ներհատով է եղել մեր ազգի գիտակցությանը: Այս փաստը կարող են ժխտել ազգի թշնամիներն ու ազգային նիկիլստաները, միայն թե ոչ անաշար ու բարյացակամ մարդիկ, որոնք քաջ ծանոթ են հայոց պատմությանն ու մշակույթին: Վերջիններիս թվում արժանի է հիշատակման ռուս պատմաբան Մերգեյ Գլինկան, որ գրել է. «Բարոյափիլիսոփայական պատմության մեջ Բելին եւ Հայկին կարելի է անվանել այն թեսի ներկայացուցիչներ, որոնք բաժանում են մարդկային ցեղի ընտանիքը: Հանձինս Բելի տեսնում ենք բռնությունն ու իշխանամոլությունը, որը տենչում է ամեն ինչ սարկացնել ու ամեն ինչ ոչնչացնել, իսկ Հայկի կերպարում՝ մեծահոգի քաջությունը, որը պաշտպանում է մարդկության անկախությունը Եւ իրավունքները» (Сергей Глинка. Обозрение истории армянского народа. М., 1832, с. 49):

Նա նաև նշել է, որ իին Հայաստանի համար խորթ էր ասիական ինքնակամայականությունը կամ բռնակալությունը, որ «Հայաստանի նախասկզբնական կառավարումը ներկայացուցական էր, այսինքն՝ ակնհայտորեն համաժողովրդական» (Եջ 53):

Ազգային ինքնուրուցնության ձեռքբերումը, միշազգային հասարակության ու կազմակերպությունների կողմից հայոց պետառության ճանաչումը կարեւորագույն փաստ է հայ ժողովրդի պատմության մեջ, վճռորոշ քայլ մեր ազատության ու անկախության ճանապարհին: Բայց դա բավական չէ ոչ միայն այն

պատճառով, որ լիակատար ազատություն ու անկախություն գոյություն չունի, կամ որ անկախության աստիճանը պայմանավորված է երկրի տնտեսական զարգացման մակարդակով, այլ նաև այն պատճառով, որ ժողովրդին իրեն ազատ է զգում միայն այն դեպքում, եթե ապրում է ժողովրդավարական հասարակարգում: Ի վերջո, ժողովրդի համար չկա մեծ տարբերություն, թե ում ստրոկն է՝ օտարի թե՛ սեփական բռնակալների: Դրանով է բացատրվում այն շեշտված ուշադրությունը անկախության ու ժողովրդավարության խնդիրների նկատմամբ, որը ներկայումս հայ ազգը, հատկապես նրա մասվորականությունը, դրսեւորում է բռնակալության ու իրավագրկության վանդի անգամ ամենաշշին դրսեւորումների նկատմամբ:

Այսօր կառուցվում են ժողովրդավարական կառավարման հիմքերը, ստեղծվում է այն պետությունը, որը պետք է համապատասխանի ազգի իդերին ու սպասումներին, առավելագույն համահունչ լինի իդեալական պետության մասին մեր պատկերացումներին: Միայն այդպիսի պետություն կառուցելու դեպքում ժողովրդը համոզված կլինի, որ դա իրեն ծնունդն է, իրեն կամքի արտահայտման գործիքը, իրեն կենսական շահերի արտահայտողն ու պաշտպանը, որ պետությունը երբեք չի դառնա չար ուժ, որը կսարկացնի իրեն: Միայն ժողովրդավարական պետությունը կդարձնի Հայաստանի Հանրապետությունը գգողական կենտրոն բոլոր առաջադեմ ուժերի համար: Այդ դեպքում նա կընկալվի որպես իսկական հայրենիք համասիյուտ հայության կողմից:

Դարերի ընթացքում հայերը կանգնած էին ֆիզիկական բնաջնջման եզրին, ենթարկվում էին ծովման: Այստեղից են սկզբնավորվում ակունքները այն գլխավոր գաղափարի, որը իշխում էր հայկական ազգային գիտակցության մեջ. ինքնապահանում՝ ներառյալ ազգի գոյատեսությունը, ազգային լեզվի ու մշակույթի պահպանում, պետականության վերականգնում եւ այլն: Այդ գաղափարը երկար ժամանակ համազգային էր,

միավորում էր ազգի բոլոր խավերին, կազմում էր քաղաքական հոսանքների մեծամասնության գաղափարախոսությունը: Անկախության վերականգնումից հետո սկսեցին իշխել նոր հրամայական պահանջներ, որոնց մասին անցյալում խոսք անգամ չէր կարող լինել: Դրանք են. երկրի տնտեսական անկախությունը, աշխարհի ամենազարգացած երկրների արտադրական, գիտատեխնիկական ու մշակութային նակարդակին հասնելը, ժողովրդավարական պետության ամրապնդումն ու զարգացումը: Այդ խնդիրների իրագործման գլխավոր գործիքը պետությունն է:

Ազգի եւ պետության փոխհարաբերությունների բնույթը վառ կերպով դրսետրվում է այլ ժողովուրդների հետ շփման ընթացքում: Տնտեսական, կենցաղային, մշակութային կապերը ձեւավորվում են մշտապես ու ամենուրեք՝ անհատական-խմբակային մակարդակով, առանց պետական կառուցվածքների անմիջական միջամտության: Սակայն այնպիսի կարեւորագոյն կենսական խնդիրներ, ինչպիսիք են պատմական զարգացման ուղղությունը, պատերազմն ու խաղաղությունը, հարեւան ժողովուրդների հետ հարաբերությունների զարգացումը եւ այլն իրագործվում են պետությունների արտաքին քաղաքական գործունեության միջոցով:

Միջազգային քաղաքական պրակտիկայում ընդունված է այն դրույթը, թե պաշտոնապես ազգը ներկայացնող պետությունն է արտահայտում նրա շահերն ու կամքը: Թե որքանով է դա համապատասխանում իրականությանը կախված է շատ հանգամանքներից, այդ թվում նաև պետական նախագնների եւ ժողովրդի կամքի համընկնման աստիճանից: Պատմության մեջ լինում են նման համընկնման փասեր, առանձնապես արտաքին զավթիչների դեմ մղվող պայքարի պարագայում, բայց քիչ չեն նաև հակառակ փասերը: Եթե, օրինակ, այսպես կոչված «մեծ նվաճողները» ձգտում էին աշխարհի նկատմամբ իրենց տիրապետությունը հաստատել միլիոնավոր մարդկանց զոհերի ու տառապանքի գնով, ապա հազիվ թե դա համապատասխա-

նում էր ժողովուրդների շահերին ու կամքին:

Ազգային ծգառամներն ու պետության գործունեության համապատասխանության խնդիրը ավելի է բարդանում բազմազգ պետություններում, որոնք լավագույն դեպքում արտահայտում են իշխող, այլ ոչ թե տվյալ երկրի բոլոր ազգերի կամքն ու շահերը:

Բազմազգ կայսրությունների կողմից տարվող զավթողական կրիվները առանձնապես չեն համապատասխանում այն ազգերի շահերին ու կամքին, որոնք ժամանակին իրենք են նվաճված ու ստրկացված:

Ինչպես նշվեց, քաղաքական իրողություն է այն, որ միջազգային ասպարեզում ազգերը ներկայացված են պետությունների միջոցով: Դրա արդարացի կամ ոչ արդարացի լինելը արտահայտվում է յուրաքանչյուր կրնկրես դեպքում: Սակայն սիսակ կիննի պնդել, թե դա՝ միակ ծիծակ եւ արդարացի սկզբունքն է, ինչպես ընդունված է միջազգային քաղաքական պրակտիկայում: Օրինակ, հայ ազգի իրավունքը իր պատմական հողերի նկատմամբ, որոնցից նա դուրս է մղվել ցեղասպանության քաղաքականության հետեւանքով, տասնամյակների ընթացքում բազմաթիվ անգամ ժխտվել է ԽՍՀՄ կառավարության հայտարարություններում, որը պաշտոնապես ներկայացնում էր հայ ազգը եւ որպես այդպիսին ճանաչված էր միջազգային կազմակերպությունների կողմից: Մինչդեռ հայ ժողովուրդը երբեք չի իրաժարվել իր իրավունքից պատմական արդարության նկատմամբ: Այլ բան է, որ հայ ժողովուրդը եւ այժմ նրա օրինական անկախ պետությունը չեն դիմել ու մտադիր չեն դիմելու ուժային գործողությունների՝ պատմական իրավունքների վերականգնման համար:

Իհարկե, ոչ մի պետություն ի վիճակի չէ ամբողջապես ու լիակատար կերպով արտահայտել ժողովուրդի կամքը թեկուց այն պարզ պատճառով, որ ոչ մի ազգ սոցիալապես միատարր չէ, հետեւարար, նրա զանազան տարրերի կամքը սովորաբար տարբերվում է միջանցից: Բայց առավելագույն մոտենալ այդպիսի իդեալին կարող է իսկապես ազգային ու ժողովրդա-

Վարական պետությունը: Նման պետությունների թիվը պատմության մեջ շատ սակավ է: Կարելի է ասել, որ դրանք կազմում են հազվադեպ բացառություն:

Նորանկախ հայկական պետությունը ունի բոլոր ավյալները այդպիսի բացառություն դառնալու համար: Նախ այն պատճառով, որ հայոց պետությունը, ի տարրերություն շատ ուրիշ պետությունների, երբեք չի մղել զավթողական կոչվներ, չի ունեցել նվաճած գաղութներ, չի սարկացրել այլ ժողովորդների: Կայսերական, մեծապետական մասնակիությունը, արհամարհանքը այլ ազգերի նկատմամբ երբեք տեղ չեն գտել հայ ժողովորդի գիտակցության մեջ: Հայկական ազգային պետությունը երբեք չի սարկացրել իր ժողովորդին, հայկական ազգային գիտակցության համար խորթ է սարկական ու սարկատիրական հոգեբանությունը, այդ պետության համար հասուկ է հարգալից վերաբերմունքը այլ ժողովորդների իրավունքների ու ազատության նկատմամբ: Եվ այժմ էլ, վերածնվելուց հետո, հայկական ազգային պետությունը զարգանում է ազատության ու ժողովրդավարության ուղիով, որովհետեւ այդպիսին է ազգի ցանկությունն ու կամքը: Այժմ ազգն է ստեղծում իր պետությունը, որը չի կարող հաշվի չնատել նրա կամքի հետ:

Վերջապես, հայ ազգի սփռվածությունը աշխարհում, Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը իրամայաքար պահանջում են ինսեքրացվել համաշխարհային տնտեսական, քաղաքական ու մշակութային ընկերակցության մեջ, իսկ դա հնարավոր չէ առանց խաղաղասեր արտաքին քաղաքականության, առանց բարեկամական հարաբերությունների բոլոր այն ժողովորդների հետ, որոնք չեն դրսետրում թշնամական վերաբերմունք՝ Հայաստանի նկատմամբ եւ հասկանում են հայ ազգի ձգառությանը կառուցել խաղաղ, երջանիկ ապագա:

Ազգը, նրա ցանկությունները, կամքը ու սպասառները՝ առաջնային են, ամեն ինչից վեր, նրանք բարձրագույն նպատակ են, իսկ պետությունը՝ այդ նպատակին հասնելու միջոց է ու գործիք:

ՄԱՆՈՒԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՄԲՈՂՁԱՏԻՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Նախնական նկատառումներ

Համայնավարական ամբողջատիրության գաղափարախոսությունը, նրա իիմնադիրներն ու հետեւորդները, ցանկացած գաղափարախոսություն նույնացնեն են դասակարգային շահերի, գիտակցության, համոզմունքների ու տրամադրությունների հետ: Խիստ միակողմանի այս նեղ ըմբռնումը, նրա վրա հիմնված գաղափարաքաղաքական պրակտիկան անտեսում կամ ուղակիորեն ժխտում է ազգային շահերով ու արժեքներով առաջնորդվող գաղափարախոսության վերադասակարգային բնույթը:

Դա մեզ քաջ հայսանի է ոչ հեռու խորհրդային անցյալից, երբ հոգեւոր կյանքի համապարփակ ու գրեիիկ գաղափարախոսականացումն, ազգերի ու անհատ մարդկանց նկատմամբ քաղաքական բռնությունները հանգեցրել էին քրիստոնաշչունչ արժեքների՝ գթասրառության, զղման, ապաշխարանքի, սիրո ու մաքրակենցաղ նվիրվածության զգացումների բթացմանը, յուրօրինակ բարոյական խլությանը: Մարդն ունկնդիր չէր իր հավատահած խղճի ձայնին:

Խորհրդանշական է, որ զորանոցային սոցիալիզմի, այդ «Զարի կայսրության» սամալինյան շրջանում կասկածամությունը նոյնացվել էր քաղաքական աշալըշության, անհոգի հաշվենկատությունը՝ «Պետական» շահերի հետ: Մարդ զանգվածը վերածվել էր անհայրենիք ու քրիստոնամերժ, անհավատ ամրոխի, քաղաքական մեթենայի հղված դետալի, որի սոցիալական մղումներն ու շարժումները հեշտորեն կառավարվում էին: Ազգային մասունքների ոչնչացումը (Եկեղեցիների եւ այլն), Հայ Առաքելական եկեղեցու նվիրյալ սպասավորների նկատմամբ ֆիզիկական

բռնություններն ու հալածանքները չեն կարող ծանր չանդրադառնալ մեր ժողովրդի բարոյական նկարագրի, հասարակական բարքերի ողջ հյուպահցի վրա: Պրակտիկա էր դարձել «քուժել» մարդկային հոգիները, բռնությամբ «կերտել նոր մարդուն», չնայած ակնհայտ էր, որ իսկական հոգետրն ու բռնությունն իրար հակուանյա են:

Այսօր մենք ձգում ենք քրիստոնեական ավանդույթների եւ ժողովրդավարական արժեքների հիման վրա կերտել հայ ազգի նոր նկարագիրը, ապահովել մարդու եւ ազգի իրավունքների լիակատար իրականացումը: Դրան հետեւդականորեն հետամուս է հայ ազգային գաղափարախոսությունը, որի հոգետը առաջնահիմքը քրիստոնեական ու ժողովրդավարական արժեքների ներդաշնակ միասնությունն է:

Մեր մոտեցումը թելադրվում է նրանով, որ կան ուժեր, որոնք վերացական հումանիզմի դիրքերից մարդու իրավունքները հակադրում են ազգերի ինքնորոշման իրավունքին, դրանով ուղի են հարթում ազգային գաղափարախոսության կարեւորության թերագնահատման, իսկ առանձին դեպքերում՝ ժխտման համար: Հոլովկում է մտացածին այն փաստարկը, որի համաձայն քաղաքական բազմակարծության ու բազմակուսակցականության աստիճանական արմատավորումը հետհամայնավարական պետություններում ծայր աստիճան նվազեցնում է ազգային գաղափարախոսության դերը: Բարենորոգչական թերեւությամբ ազգային գաղափարախոսության ամեն մի դրսեւորույթ նույնացվում է ազգայնամոլության, ազգային բացառիկության անսըռղ քարոզի հետ: Հաշվի չի առնվում, որ առողջ ու կենսահաստատ ազգայնականությունը ոչ միայն չի անառում ուրիշ ժողովրդների իրավունքը պահպանելու իրենց ազգային ու մարդկային արժանապատվությունը, պետականական եւ քարոյահոգետը ինքնատիպությունն, այլև դրանց համար ստեղծում է անհրաժշտ նախադրյալներ: Մտազգաստ ու ողջամիտ ազգայնականության փիլիսոփայությունը մերժում է քաղաքական ամեն մի

անհանդուրժողականություն ու ազգային խարականություն: Ազգայնականության գաղափարախոսությունն ազգամիջյան խաղաղության վարդապետառություն է: Ցանկացած ազգ (ժողովրդուր) իրավունքը ունի պահպանելու իր ինքնուրույնությունն ու պատմահոգեւոր ուրույնությունը: Հայ ազգային գաղափարախոսությունը հետամուս չէ իր ժողովրդի այնպիսի կերպարի ստեղծմանը, որը մերժում է այլ ժողովրդների, հատկապես Հայաստանի տարածքում ապրող ազգային փոքրամասնությունների կենսապահպանման հիմնարար իրավունքները: Դրա վառ ապացուցն է քրդական, ոռական, հումական եւ այլ համայնքների իրավահավասար գոյությունը: Հետեւաբար, էժան քարոզչական մտակաղապարները, զորօրինակ՝ «ազգային գաղափարախոսությունը» մեր գավառականության հոգետը արտազտվածն է», «քաղաքական մոլեռանդության սերմանման գործիքը», «19-րդ դարի հայ քաղաքական միֆոլոգիայի ժառանգությունը», «կիսագրագետ հայ մտավորականների հոգեբանական մենաշնորհը» եւ այլն, սնանկ են թե՛ պատմաճանաչողական եւ թե՛ քարոյական առումներով: Այսօրինակ քարոզչական մտակաղապարները, որ առերեւույթ մատուցվում են հասարակական կյանքի ապագաղափարախոսականացման տեսքով, իրականում որոշակի գաղափարախոսական պատվերի արտահայտություններ են: Դրանք, նախ եւ առաջ, կոչված են ուղի հարթելու Արեւուտքի տեսեսական, սոցիալական եւ պետական մողելների անարգել մուտքի, ավելի ճիշտ՝ դրանց մեխանիկական ընդորինակման համար: Ամենեւին ջերագնահատելով այդ մողելների նշանակությունը մեր ազգապետության համալիր կայացման գործում, առավել եւս՝ լինելով դրանց եռանդուն պաշտպանը, գտնում ենք, որ դրանք պետք է հարմարեցվեն մեր ազգային, ավանդությունների եւ հոգեկերտավածքի առանձնահատկություններին: Ընդամին, պետք է առաջնորդվել ազգային շահերի գերակայության, ինչպես նաև դրանք այլ ազգերի շահերի հետ համակշռելու երկրագաղաքական սկզբունքներով:

Վերատին հայացք ձգելով վերացական հումանիզմի իդեալների վրա, ցանկանում ենք ընդգծել որ դրանք նյութափրավական իրողություն պետք է դառնան ազգերի ինքնորոշման իրավունքի համապարփակ իրականացման, ազգերի ինքնամփոփյան պահպանման ներպետական եւ միջապետական, միջազգային կայուն երաշխիքների ստեղծման շնորհիվ: Միայն այսպես վերացական հումանիզմի իդեալները կվերածվեն կոնկրետ հումանիզմի:

Անթուլապելի է համամարդկային արժեքները հակադրել ազգային արժեքներին, քանզի ցանկացած ազգ համամարդկային արժեքների հետ համահղորդակցվում, դրանք խորապես սեփականում եւ հենց իր ազգի գերակա արժեքների միջոցով: «Ետեւարար, իր առաջնահիմքով ազգայինը ամեննեին հակուռացա չէ համամարդկայինին: Ավելին, ազգայինը համամարդկայինի գոյության եւ զարգացման պատմականորեն անհատականացված եղանակն է: Ի լրումն ասվածի, ավելացնենք, որ քաղաքակիրթ մարդկությունը կարող է զարգանալ հումանիստական ռադիով, եթե պահպանի ու կատարելագործի իր եթնիկական, ազգային բազմերանգությունն ու բազմաձեւությունը: Դիպուկ է ասել մեծ հայրենասեր Միքայել Նալբանդյանը. «Ազգությունը հառաջ է, քան թե ընդհանուր մարդկությունը, եւ ամենայն մարդ յուր ազգությամբ է մանում ընդհանուր մարդկության մեջ»¹: Մեկ այլ առնչությամբ ընդգծել է. «Ազգը ասացյալ է այն ուժը, այն կենդանի կապակցությունը մարդերի, որ առանց նորան, կամ նորանից դուրս, մասնավոր մարդը կը լիներ մի անօգուս անձնասեր - քուստ, իսկ բոլոր մարդկությունը մի անապուղ վերացականություն»²:

Այս ընդհանուր մոսեցումը կամ դիրքորոշումը հավասարապես վերաբերում է նաև ազգային գաղափարախոսությանը, որի նշանակությունը անժխտելի է, իսկ կարեւորությունը՝ մեր օրեւում գնալով աճում է:

1 Միք. Նալբանդյան, Երկեր, հ.1, էջ 454:

2 Նոյն տեղում, հ.2, էջ 257:

Աներկրայելի է, որ ազգային գաղափարախոսության դերի չգիտակցումը, որեւէ նվաստացումը եւ թերագնահասումը խիստ բացասաբար կազդի մեր ներկայի ու ապագայի վրա: Ճիշտ նույնպես՝ ազգային գաղափարախոսության գերկարեւորության, նրա նպաստաշահ գործադրումների իրատապության խոր գիտակցումը, կարող է բազմապատկել հայության ներուժը:

Ազգային գաղափարախոսությունը՝

**համահայկական գաղափարն է
գործողության մեջ**

Ազգային գաղափարախոսությունն ազգի գերագույն շահերի, իդեալների, գաղափարների, համոզմութքների եւ գործողության մղող դիրքորոշումների ամբողջական համակարգ է: Այն կենսահաստատ կամք, նպատակաւացություն է հաղորդում սեփական հանրույթի ինքնամփության պահպանմանը, նրա արժանապատիվ գոյության պետական ծեւերի զարգացմանն ուղղված կառուցողական ջանքերին:

Ազգային գաղափարախոսությանը միասնականությունն են հաղորդում մեր հավաքականության գերակա շահերը:

Դրանց գիտակցումը, իրականացման ուղիների, միջոցների ընտառության հիմնավորումը դառնում է գաղափարախոսության գերխնդիր:

Ուղղակի թե անուղղակի, գիտակցված թե չգիտակցված ազգի գերակա շահերը արտացոլվում են մեր զգացմունքների, արժեկողմնորոշումների, աշխարհընկալման առանձնահատկությունների մեջ: Շեշտենք այն, որ ազգային զգացմունքների գաղափարաբարյական առանցքը հայրենասիրությունն է: Այն ներառում է իր մեջ հուգական բնութագրերի ողջ համալիր՝ սեր, հպարտություն, հարգանք, նվիրվածություն, ազգային պարագի զգացում: Դրանք համախմբված են հայրենիքի, պետականության գաղափարների շուրջը: Ազգային զգացմունքների թվում

առավել զարգացած զգացմունքը ազգային հպարտությունն է, որին բնորոշ են ինքնահարգանքը, արժանապատվությունը, մարդկային քաղաքակրթության մեջ իր ազգի պատմական Ծերորուսի գիտակցությունը եւ այլն: Դրանց առկայությունը ինքնին վկայում է ազգի ներհամախմբվածության, համերաշխության եւ բարոյաքաղաքական հասունության մասին: Ազգային հպարտության գիտակցությունը հետապնդում է մեկ գլխավոր նպատակ՝ ապահովել ազգի արժանապատճի, բարեկեցիկ եւ անվանգ կյանքը: Զկա մարդկային հպարտություն առանց ազգային հպարտության եւ, ընդհակառակը:

Ազգի գերազուն շահերը ինչ-որ ձետվ հանգուցակապված անդեմ շահերի միասնություն չեն, այլ ազգային հանրույթի տարբեր խավերի եւ դասակարգերի շահերի, անգամ իրարամերժ, հաշվեկշռված ամրողչություն: Այդ շահերի ձեավորման եւ գիտակցման առանձնահատկությունների, մասնավորապես, եղանակների ու ձեւերի վրա ազդում են նաև տվյալ եթնիկական հանրույթի կռնկրետ երկրաքաղաքական պայմանները, դրանց փոփոխման միտումներն ու օրինաչափությունները: Չորորինակ, հայ ժողովորի գոյության երկրաքաղաքական պայմանները իրենց կնիքն են դրել մեր ազգային նկարագրի, ապրելակերպի ու աշխարհներկալման վրա: Նեղ իմաստով, անգամ կարելի է խոսել հայ ազգի երկրաքաղաքական գաղափարախոսության, կենսափիլսոփայության մասին, որոնց մեջ արտացոլվել են մեր տարածաշրջանային կարգավիճակը՝ իր հարափոխ եզրերով, սեփական ճակատագրի ինքնազնահատականները, հարեանակից ժողովուրդների հետ ունեցած փոխհարաբերությունների բնույթը եւ այլն: Կասկածից վեր է, որ մեր ազգային գաղափարների, նրանց գերակայությունների առանձնացման չափանիշները մշակվել են մեզ շրջապատող երկրաքաղաքական միջավայրի, նրանում պատմականորեն խաչաձեւվող տարրեր ժողովուրդների շահերի իմաստավորման հիման վրա: Այդ իրողությունը մեզանում ձեռք է բերել պատմական ավանդույթների նշանակություն:

Նկատենք նաև, որ ազգային գաղափարները վերածվում են համոզմունքների, քաղաքական հոգեկերտվածքի, եթե դրանց նկատմամբ ձեավորված է ակտիվ վերաբերմունք, անկախ նրանից, թե ինչպես է այն կազմավորվել՝ տարերային թե գիտակցված, ռացիոնալ թե հոգական եղանակներով: Ակնբախ է, որ հայերի ճնշող մեծամասնությունը մեր պետականության համալիր կայացման մեջ տեսնում է իր ազգաւու անկախ գոյության գործնական երաշխիքն ու նախադրյալը: Այս համոզունքը աստիճանաբար դառնում է մեր քաղաքական գիտակցության եւ հոգեկերտվածքի արժեառանցքը:

Ազգային գաղափարախոսությունը նաև որոշակի կառավարման համակարգ է, որը ոչ միայն հիմնավորում եւ արդարացնում է ազգային գաղափարները, նրանց իրականացման միջոցների ընտրության բնույթը, այլեւ անմիջականորեն ներգործում է դրանց համարժեք քաղաքականության իրացման վրա: Ազգեցության արդյունավետությունը որոշվում է, նախ եւ առաջ, նրանով, թե որքանով է ազգային գաղափարի, իդեալի իրականացումը հիմնվում պատմական միտումների իրատես գնահատականների, հնարավոր զարգացումների ստուգ հաշվարկների վրա: Ի տարբերություն գաղափարախոսության, պրակտիկ քաղաքականությունը չունի իդեալական լուծումներ, քանի որ ցանկալի ու իրապես հասանելի նպատակների համակշռված համեմատությունից են ծնվում հարաբերական օպտիմալ քաղաքական լուծումները:

Ցանկացած գաղափարախոսություն, այդ թվում ազգային, թեակոխում է իր պատմական ձեավորման փուլը, երբ արդեն մշակված են նրա գաղափարատեսական ընդհանուր հիմքերը: Նոր ժամանակներում եվրոպական ազգերի գաղափարական հիմնայունները կառուցվեցին միայն այն բանից հետո, երբ գաղափարախոսների կողմից արդեն մշակվել էին նրանց առաջադիմության գերակա շահերն ու նպատակներն արտահայտող սոցիալ-ֆիլիսոփայական վարդապետությունները: Ընդ-

հանրապես այս իիմքի վրա ստեղծվեցին իրավական, քաղաքական, բարոյական, տնտեսական եւ սոցիոլոգիական կոնկրետ ուսմունքներ, որոնք հստակեցվեցին քաղաքական ծրագրերում:

Հայ քաղաքական մտքի պատմության մեջ 19-րդ դարը նշանավորվել է որպես ազգային զարթոնքի, նրա գաղափարախոսական իիմնավորման դարաշրջան: Ենց այդ ժամանակներում հայության գոյությունը բացատրող պարզունակ պատմական սիեմաներից ազգային գաղափարներն աստիճանաբար սկսեցին վերածվել քաղաքական ուսմունքների, սկզբնապես զուտ մեր գոյապահպանության իիմնախմելիրների, իսկ այնուհետեւ՝ նաեւ ազատ ու անկախ պետականության իդեալի կենսագործմանը նպատակառողկած քաղաքական ծրագրերի:

Ակնհայտ է, որ 19-րդ դարի հայ գաղափարախոսների վրա մեծապես ազդել են Եվրոպական մտքի հոգեւոր ձեռքբերումները: Սակայն նրանք երբեք չեն եղել այդ ազգեցության մեխանիկական կրողները, քանի որ ստեղծագործարար են յուրացրել Եվրոպական մտքի ողջ հարստությունը՝ հմտորեն այն սպասավորելով ազգի գերազուն շահերի իրականացման գործին: Պատահական չէ, որ մեզանում ժողովրդավարության, ազատականության, ինքնիշխան պետականության եւ սոցիալական արդարության գաղափարները մշտապես փոխկապակցված են եղել ազգային-ազատագրական շարժման գերազուն նպատակի՝ հայոց պետականության վերակերտման հետ: Ազգանվեր, լուսավորյալ մտավորականությունը գիտակցել է, որ հայեցի անհամար չի կարող ազատ լինել, եթե ազատ չէ իր ազգը: Եվ ընդհակառակը՝ ազգը չի կարող ազատ լինել, եթե ազատ չէ նրա ամեն մի անդամը: Նրանք ամբողջովին մերժել են ամեն մի ազգային և սոցիալական ճնշում, մարդու եւ ազգի իրավունքների ու ազատությունների յուրաքանչյուր ուսմահարում: Ավելին, նրանցից շատերն իրավացիորեն գտնում էին, որ ազգային ազատությունն՝ իր քաղաքական, տնտեսական եւ իրավական իիմնաեղբերից զատ նաեւ առանձնահատուկ կրօնահոգեւոր վիճակ,

ինքնազգացողություն է, որին անհնար է հասնել առանց խղճով ու մաքով մաքրագործվելու:

Առանց խղճի, սիրո ու վստահության առ Աստված չկա իսկական հավատ, հետեւարար՝ հոգեւոր ազատություն, որն անբաժան է անհատական, ազգային պատասխանամովության զգացումից եւ բանական ինքնասահմանափակման սկզբունքից: Չմոռանանք, որ մեզանից ամեն մեկի ազատությունը չպետք է իրագործվի ուրիշների, հատկապես, մեր հայրենակիցների ազատության ուսմահարման շնորհիվ:

Երեկ եւ այսօր իրենց անանց այժմեականությունն են պահպանել Պողոս առաքյալի ազգուսանելի խոսքերը. «Մաքրենք մենք մարմնի եւ հոգու ամեն պղծությունից, կատարյալ դարձնենք սրբությունը Աստծո երկյուղով»:

Հատուկ շեշտենք, որ սրբությունը մշտապես նախորդում է գաղափարախոսություններին, աշխարհիկ այլ վարդապետություններին, ժողովրդի հոգեւոր միասնության միջոցն ու նպատակն է: Սրբության նշանակության գիտակցումը թույլ է տալիս խոսել ազգային գաղափարախոսության եռթյան, ժողովրդի ճակատագրի մասին: Խորիրդանշական է, որ կրոնը, հատկապես, քրիստոնեությունը մշտապես անբաժան է եղել հայ ազգի պատմական ճակատագրից, ավելին՝ ինչ-որ իմաստով, այն ձեւավորել է:

Այստեղից ծագում է քրիստոնեության դերի վերաբերքավորման եւ նրա վերականգնման անհրաժեշտությունը: Հայոց պետականության իդեալի կենսագործումն անհնար է առանց քրիստոսասեր, լուսավորյալ ու կրթված ազգի, նրա նոր, ժողովրդավարական տիպարի ձեւավորման:

Այսօր պահանջվում է, որպեսի անկախ ու ազատ պետականության գաղափարը դառնա հավաքական հայության, նրա ամեն մի անդամի կայուն համոզմունքն ու դիրքորոշումը: Հիրավի, հոգով ազատ է միայն այն հայը, ով իր ազգի ճակատագիրը, նրա գերինդիրը՝ անկախ պետականության

համակիր կայացումը համարում է ոչ թե արտաքնապես պարտադրված իրողություն, այլ՝ իր հոգու ազատության անբաժան տարր:

Այսպիսով, ազգային պետականության կառուցումն ինքնանպատակ չէ: Պետությունն անձեւ ու ամորֆ կառույց չէ, այն տվյալ ժողովրդի հոգեկերտվածքի բարոյահրավական առարկայացումն է:

Ամեն մի հայ պետք է խորապես հասկանա, որ մեր գերագույն շահերի կենտրոնում այլիս ոչ թե զուս գոյապահպանական, այլ պետականության կայացման հիմնահարցերն են ծառացած: Չհասարակացնելով այդ բարդ գործընթացը, ընդգրծենք, որ մեր քաղաքական հոգեկերտվածքը երկիրկաված ներքին գոյացություն է: Նրան բնորոշ են՝ հայրենասիրությունը, նվիրվածությունը՝ «այ Դատին ու Հայ պահանջամարտությանը, նորանկախ պետականության խորհրդանիշներին, ինչպես նաև Եսական օգտապաշտությունն ու նիկիլիզմը, քաղաքական համակերպողականությունն ու հաճկատարությունը»:

Միանգամայն իրավացի են նրանք, ովքեր գտնում են, որ անակնկալ ազատությունը կյանքի է կոչել քրիստոնեական եւ ժողովրդավարական արժեքներին խորթ արժեքներ, բարքեր: Անձի կամքի ազատ արտահայտումը հաճախ ուղեկցվում է սառին բնազդների, ինքնակործան ու ազրեսիվ նոր մղումների ազատագրմամբ: «Ասարակական թեմ է դուրս գալիս «ամրոխի մարդը»՝ իր անվերահսկելի բնազդներով ու վաղանցիկ կրքերով:

Ներկայիս բեկումնային ժամանակներում ստեղծվել է եզակի հնարավորություն կենսագործելու հայոց պետականության իդեալը: Դա անհնար է առանց համազգային շահերի գերակայության զանգվածային գիտակցման, քաղաքացահական հասունության եւ ժողովրդական կամքի ամրության: «Այ ժողովրդի կողմից իր պատմական առաքելության գիտակցումը պահանջում է բարոյական խիզախություն, որը վեր է ամբողջատիրական ժամանակներից ժառանգված քաղաքական բարքերին կուրորեն հետեւելու անպատասխանառու վարքագծից: Մեզանից ոչ մեկը

իրավունք չունի իր նեղ անձնական, Եսական նկրտումները վեր դասել ազգի գերագույն շահերից: Դեռևս Միք. Նալբանդյանն է նկատել, որ «Ազգի անդամք ամենեքյան համարում են յուրյանց անձը մասնավոր, ազգը դարձել է մի վերացականություն եւ այդ է պատճառը, որ ազգի հառաջադիմության սայլը ընկած է մնում ձանապարհի վերա, որովհետեւ ամենայն մարդ, մասնավոր համարելով յուրյան, սիրա չունի մոտենալ եւ ձգել տանել այդ սայլը»¹:

Սա. Նազարյանը ավելացրել է, որ համազգային գործը հնարավոր է այնտեղ, «ուր Եսականությունը, անձնական ախտերը, անհատի ազատությունը չափ ու սահմանի տակ են եւ հնազանդում են բանականության իրամանին, հասարակած օգտին»²:

Արդյոք բնակ պիտի կարողանանք ազգի Գերագույն շահերը վեր դասել հասկածական, ժամանակավոր օգոտներից: Այս, եթե մեր պատմության դասերից ձշարիտ հետեւություններ կատարենք, եթե հասկանանք, որ զոհաբերությամբ է սկսվում ամեն մի ազգաշինություն, զրկանքի հանձնառությամբ է գնվում ազատությունը, բարեկեցիկ ու անվտանգ կյանքի իրավունքը:

Ներկայիս հետհամայնավարական պատասխանառու շրջանում առավել իրատապ է հայ ժողովրդի սահմանադրական լուսավորության հիմնախնդիրը: Ժողովրդավարության, նրա սահմանադրական արժեքների վրա հիմնված հայրենասիրության դաստիարակումը ազգային գաղափարախոսության նպատակային հանգուցահարցն է: Որտեղ ձեավորված չէ սահմանադրական հայրենասիրություն, այնտեղ չկա եւ իսկական ժողովրդավարություն: Առհասարակ, պատմությունը վկայում է, որ ազգերը, որոնք չեն ստացել լիարժեք հայրենասիրական դաստիարակություն, վաղ թե ուշ վերացել են: Ավարայրի, Սար-

1 Միք. Նալբանդյան, հ. 2, էջ 256:

2 «Հյուսիսավայր» 1860, 1, էջ 6:

դարապատի ճակատամարտերում հայ ժողովրդի տարած քարոյական հաղթանակի պատճառները, նախ եւ առաջ, պետք է փնտորել ճշմարիտ դաստիարակության մեջ:

Ազգային գաղափարախոսությունը կատարում է ազգաճանաչության, ազգապահպանության, ներկայամասնության, գնահատման եւ ինքնարժեքավորման, կանխատեսման եւ գործողության մըդման գործառույթներ: Մենք ցանկանում ենք հասկանալ մեր պատմության խորհուրդը, գոյության իմաստը: Դա մշտաներկան ներքին պահանջմունք է, առանց որի անհնար է ազգի իմաստավորված ու բարոյաշունչ գոյությունը: Այդ նպատակով մշակվել են գաղափարախոսական վարդապետություններ, ուսմունքներ, որոնք իմաստավորել են մեր հոգեւոր ուրույնության, ինքնատիպության պատմահոգեւոր ակունքները, ակնաշոշափելի կերպով պարզել են մեր տեղը համաշխարհային քաղաքակրթության մեջ: Մենք մշտապես ծգութել ենք հստակեցնել մեր դիրքորոշումները եւ գնահատականները ուրիշ ազգերի նկատմամբ, համեմատել մեր ազգային իդեալներն ու նպատակները ուրիշ ազգերի, հատկապես, դրկից, իդեալների ու նպատակների հետ: Ինքնաճանաշման այս ուղիղվ ընթանալով՝ ազգային գաղափարախոսությունը փորձում է հիմնավորել մեր ինքնության իմաստը, նրա պատմահոգեւոր ամբողջականության ու միասնականության նախահիմքերը:

Ազգաճանաչությունը հետամուտ է զանազան նախապաշար-մունքների եւ պատրաճների բացահայտմանը, դրանց արմատները տեսնելով, նախ եւ առաջ, հոյզերի, ապրումների ու գաղտնի կրքերի մեջ: Այդ իմաստով գաղափարախոսության հատուկ ֆեռումն է սոցիալական միֆոլոգիան (դիցաբանությունը): Առհասարակ, միփ՛ ազգային գիտակցության հիմնատարրերից է: Իսկ լայն իմաստով՝ ազգը համախմբող եւ նրան գործողության մղող հոգեհորդական գործոն է, որի ազդեցությունը համեմատելի է միայն կրոնահոգեւոր արժեքների ազդեցության հետ:

Ազգային միֆերը արտահայտում են մեր պատմական ձգումները, շահերը, դրանց առաջնայնության նկատմամբ ունեցած մեր ներքին ինառության համոզվածությունը: Դրանց ձեւավորմանը մասնակցում են երեք հիմնական մեխանիզմներ՝ ազգի վերաբերյալ մեր ինքնազնահատականները, այլ ազգերի եւ մեր համեմատությունները եւ, վերջապես, ինքնավերլուծությունը:

Ազգաճանաշման նպատակն է՝ ստեղծել մեր պատմական կեցության ամբողջական պատկերը, վեր հանել ազգային «Ես»-ի եւ անհատական «Ես»-ի առանձնահատկությունները: Շեշտենք, որ «Ես» կերպարը ունի երեք չափում՝ առկա «Ես»-ը (թե ինչպես է հայը իրեն ընկալում տվյալ պահին), ցանկալի «Ես»-ը (ինչպիսին կցանկանար իրեն տեսնել) եւ ներկայացվող «Ես»-ը (ինչպես է իրեն ցույց տալիս): Այս երեք չափումները գոյակցում են ազգային «Ես»-ի մեջ՝ ապահովելով նրա ամբողջությունն ու գարգացումը:

Ազգաճանաչությամբ ձգտում ենք մեր հավաքականությունը համախմբել, նրա մուտ մշակել միասնական գնահատականներ եւ գործելակերպ՝ հիմնվելով քրիստոնեական քաղաքակրթության ազգային ավանդույթների ու համամարդկային արժեքների վրա: Դրանով ձգտում ենք ընդգծել մեր պատկանելությունը այդ քաղաքակրթությանը, վերաբերմումքը մեր ազգային ճակատագրի նկատմամբ, որը մեր բոլոր ոգեշնչումների աղբյուրն է: Մենք ձգտում ենք, որպեսզի քրիստոնեական հայացքը մեր պատմության նկատմամբ քաղաքականության մեջ մարմնավորվի անմիջական, կառուցղական եւ սաեղծագործական ձեւերի մեջ: Խսկական ազգային գաղափարախոսությունը ձգտում է ոչ թե իդեալականացնել մեր պատմական անցյալը, նրան հաղորդել ինքնակորացնող հոգականություն, այլ մտազգաստ ու քննադատական գնահատումների դիրքերից տալ ազգի անցյալի, ներկայի եւ պազայի ճշմարիտ պատկերը:

Ազգային գաղափարախոսությունն ապահովում է ազգի բարոյահոգեւոր ու քաղաքական միասնությունը: Առանց միասնութ-

յան չկա ազատություն: Առանց ազատության անըմբռնելի է ազգի միասնության ու ներհամախմբվածության գաղափարը: Ներհամախմբվածություն՝ նշանակում է ընդհանուր համաձայնություն ու համերաշխություն:

Համախմբելով կոտրակված հայությունը՝ ի շահ «հայադեմ հայրենիքի եւ պետության», ազգային գաղափարախոսությունը պետք է նպաստի, որ հայությունը դառնա «պատվախնդիր եւ մարտունակ զանգված» (Ն. Աղքասահ), որպեսզի ամեն մի հայլինի «ազգի հավատարիմ որդի», պատրաստ լինի մեռնելու «ինչպես հայկազն»՝ «այսատանի համար» (Խ. Արովյան):

Ազգային գաղափարախոսությունը ոչ միայն պահպանում, համախմբում է ազգին, այլև նրան կառուցվածքայնորեն տարբերակում՝ հասուկ գրավություն հաղորդելով ազգապատկանելության մեր հզոր գիտակցությանը:

Ազգաճանաչումը սերտորեն կապված է նաև ազգային զարգացման միտումների, օրինաշափությունների կանխատեսման հետ: Ամեն մի կանխատեսում հիմնվում է ինչպես ազգային կյանքի յուրահատկությունների, այնպես ել մարդկային քաղաքակրթության զարգացման ընդհանուր միտումների ձգրիտ համադրման վրա: Զննավելով որիշ ազգերին, ունենալով սեփական մշակութային դիմագիծ ու ոգի, հայ ժողովորդը մշտապես ծգտել ու ծգտում է հասարակական զարգացումը օրգանապես բաղդատել սեփական ինքնության պահպանման եւ կատարելագործման հիմնարար նպատակների հետ: Մենք ձգտում ենք չտրվել վերազգային միակերպության համահարթեցնող գաղափարական ազդեցություններին, միաժամանակ բացորշել մեր տեղը մարդկային քաղաքակրթության զարգացման մեջ: Դաշտպանում ենք այն գաղափարը, ըստ որի քաղաքակրթության ապագան ոչ թե միակերպ, այլ բազմակերպ մարդկությունն է, որի բազմազանության պահպանման խնդիրը անժըխտելի գաղափարախոսական արժեք է:

**Գաղափարախոսական զարգացման որոշ առանձնահատկությունները
հետհամայնավարական շրջանում**

Խորհրդային ամբողջաաիրության արմատական փլուզումը նշանավորվեց նաեւ համայնավարական գաղափարախոսության, նրա ենթակառուցվածքների համապարփակ ճգնաժամով: Միաժամանակ, գաղափարախոսական ինն ձեւերի սնանկության լիակատար ինքնարացահայտումը չարդարացրեց ապագաղափարախոսականացման վարդապետության շատագովների կանխագուշակումները գաղափարախոսության մայրամուսի, վերջի մասին: Անցումը ամբողջաաիրությունից ունի ժողովրդավարություն սեւեռուն ուշադրության ու հոգածության առարկա դարձրեց ազգերի ազատ ու անկախ պետականության համալիր կայացման գաղափարախոսական հիմնավորման խնդիրը:

Որո՞նք են ներկայիս անցումաշրջանի սոցիոլոգիական բնութագծերը, ինչո՞վ են դրանք տարբերվում հասարակության համեմատաբար կայուն շրջանների բնութագծերից, ինչպես են ընթանում ազգային կյանքի կազմակերպման նոր սոցիալական եղանակների, դրանց համարժեք տնտեսական, քաղաքական, իրավական եւ գաղափարախոսական մոդելների ձեւագործման բարդ ու հակասական գործընթացները: Այս հիմնահարցերը չունեն միանշանակ պատասխաններ, թեկուզ այն պատճառով, որ մերօրյա վերափոխումների ներքին դիմամիզմը, արագանցիկ փոխակերպումների տեմպերը սահմանափակում են մեր ինտելեկտուալ հնարավորությունները: Պատահական չե, որ մեր գաղափարախոս-տեսաբաններից շատերը գետեա չեն հստակեցրել իրենց պատկերացումները հայոց պետականության կայացման ժողովրդավարական մոդելների ժողովրդավարական տարբերակի վերաբերյալ: Ի լրումն ասվածի, ավելացնենք նաև, որ դժվարությունը նրանում է, որ մեզանում կատարվում է իսկական եթևոհերանական հեղափոխություն՝ վճռականորեն ազա-

տագրվում ենք խորհրդային ամբողջատիրության շերտանըստ-
վածքներից, աստիճանաբար ձեռք ենք բերում ժողովրդավարական
ապրելակերպի եւ հոգեկերտակածքի նոր որակներ: Սակայն
դեռեւ չենք մշակել ժողովրդավարական արժեքները յուրացնե-
լու այնպիսի եղանակներ, որոնք ի զորու լինեին հաշվի առնելու
մեր ինքնատիպության պահպանման ու զարգացման իհմնախըն-
դիրները: Անտարակույս, գոյություն չունի բոլոր ազգերի համար
ժողովրդավարության միասնական ինչ-որ նմուշօրինակ: Ժամա-
նակին Հեգելն ընդգծել է. «Պետական անելերի (այդ թվում՝
ներկայացուցական համակարգի) նորացումը յուրաքանչյուր ազ-
գի ուրույն զարգացման արդյունքն է, եւ այն չի կարող լուծվել
ուրիշ ժողովուրդների նվաճումների հասարակ փոխառնան
միջոցով»:

Այս տեսանկյունից կարելի է առանձնացնել ազգային գաղա-
փարների նկատմամբ վերաբերմունքի երեք տեսակ: Առաջինի
համաձայն, ազգային միասնական գաղափարախոսությունը պետք
է ամբողջովին հենվի մեր պատմաքաղաքական ավանդույթների
վրա, իհարկե, նաև համակողմանիորեն հաշվի առնի հայ
ժողովոյի գերազուն շահերի իրականացման ներկայիս փուլի
գործնական կարելիություններն ու իդեալական նպատակները:

Մյուս մոտեցումը փորձում է նորովի գնահատել մեր պատ-
մաքաղաքական ավանդույթները, դրանք մատքնելով իրենց
կազմավորման, զարգացման շղթայի մեջ, պահանջում է իրա-
ժարպել այն գաղափարներից, որոնք պատմության քննությունը
չեն բանել: Քաղաքական իրատեսության դիրքերից փորձ է
արվում վերադասավորել մեր գաղափարական գերակայություն-
ների սանդղակը, այն առավելագույնս հարմարեցնել մերօրյա
պատմական իրողությունների իրատապ պահանջներին:

Երբորդ մոտեցումը հենվում է անցյալի քաղաքական ավան-
դույթների նկատմամբ ընդգծված ժխտական վերաբերմունքի
վրա: Զարգացվում է այն տեսակետը, ըստ որի հասուն ինչ-որ
ազգային գաղափարախոսություն գոյություն չունի: Եթե, այնու-

*

ամենայնիվ, նրա անհրաժեշտությունը կա, ապա այդօրինակ
գաղափարախոսությունը պետք է հանդիսանա մեզանում եվրո-
պական տիպի ժողովրդավարական պետականության կառուց-
ման, դրա վերաբերյալ տարբեր ազգային կուսակցությունների
ծրագրերի գործնական իրականացման փորձի ընդհանրացումը: Քաղաքական պրակտիկայում նման դիրքորոշումները ուղեկց-
վում են եվրոպական ժողովրդավարության մոդելների հախուսն
կրկնօրինակմամբ, ինչպես նաև, որ առավել կարետը է՝ Հայ
Դասի, Հայ պահանջատիրության գործնական նշանակության
թերագնահատմամբ:

Այս մոտեցումների միջեւ առկա են հակասություններ, որոնց
սկզբունքային պատճառը նաև նրանում է, որ դրանց ետևում
կանգնած հասարակական ուժերը չեն կարողանում տեսնել
ազգային եւ ժողովրդավարական արժեքների միջեւ բնականոն
կազզը: Ժողովրդավարությունը ազգային համակեցության, նրա
ինքնատիպության պահպանման ու զարգացման եղանակն է: Այն
կոչված է նոր բովանդակություն հաղորդելու մեր քաղաքա-
կան հոգեկերտովածքին, նվիրվածությանը սեփական ճակատագ-
րին, մայրենի լեզվին, հայրենի լողին եւ այլ պատմահոգետը
արժեքներին: Չուգապատշաճորեն պետք է դրանք համադրի մեր
նորանկախ պետության սահմանադրական արժեքների հետ: Այս
միասնության շնորհիվ պետք է ձեւավորվի Հայաստանի՝ որպես
միջազգային հանրակցության լիիրավ անդամի, ժողովրդավա-
րական ազգային նկարագիրը: Անշուշտ, դա տեսական, իսկ,
երբեմն էլ հիվանդագին գործընթաց է, հասկապես նկատի
ունենանք, որ այն տեղի է ունենալ գաղափարախոսական
պլյուգալիզմի, քազմակարծության պայմաններում:

Նկատենք, որ կրոնների եւ աշխարհիկ գաղափարախոսութ-
յունների խաղաղ գոյակցության անհրաժեշտությունը ճանաչվել
է դեռեւ Լուսավորության դարաշրջանում: Այդ ժամանակներից
ի վեր արեւմտյան ժողովրդավարությունը վարժվել է նման
գաղափարախոսական քազմակարծությանը: Սակայն հետհա-

մայնավարական շրջանի հայ մարդու մոտ, որն առաջին անգամ բախվում է տարբեր գաղափարախոսությունների գոյակցության իրողության հետ, առաջացնում է արժեքային կողմնորոշվածության ու վստահության ճգնաժամ: Նրա համար սեփական ընտրության իրականացումը դժվարին խնդիր է: Յանկացած մարդ, այդ թվում եւ հայ, սարսափում է հավատագրկությունից, ճգառում է հենվել ինչ-որ գաղափարների ու մնայուն արժեքների վրա: Այս իրավիճակը երբեմն նպաստավոր իոդ է սաեղծում օւար գաղափարների, կրոնական աղանդների անարգել ներթափանցման համար: Ակներեւ է, որ նման ներհոսքը դեպի Հայաստան իրական սպառնալիք է մեր ազգային ուրույն արժեքների, դրանցով առգրրված ազգային գաղափարախոսության համար: Չպետք է մոռանալ, որ հետհամայնավարական անցումաշրջանում ազգային հանրույթի հոգեւոր միասնականությունն անհնար է առանց նրա գաղափարախոսական միասնության: Հատկապես, եթե գաղափարախոսական միասնությունը պետք է գործի բազմակուսակցական եւ բազմակարծ հասարակության պայմաններում: Ազգի գաղափարական միասնության ձեւավորման ընթացքը մեծապես կախված է ամեն մի քաղաքական կուսակցության վարքագծից: Եթե նրանք ներփակվեն իրենց ներ, խմբակային շահերի մեջ, անսեսելով ազգի գերազույն շահերը, ապա նորածիլ համակարգը անկարող կլինի հաղթահարելու ներազգային հակամարտությունները, եւ մեզանում չի հաստատվի միջնավային համագործակցության վերդասկարգային ոգին: Ոչ մի քաղաքական ուժ՝ թե՝ «աշակողմ», թե՝ «Ճախակողմ», թե՝ «Կենարոնամետ», ի զորու չէ առանձին-առանձին, մեկուսի լուծելու հայ ազգի հիմնահարցերը: Այստեղ անգնահատելի է հենց ազգային գաղափարախոսության վճռուց դերը: Այն պետք է բացահայտ տարբեր խմբային շահերն արտահայտող այն արժեհիմքերը, որոնք ընդհանուր եւ միասնական են ողջ հայ ազգային հանրույթի համար:

РАФАЕЛ САМСОНЯН. Нация и государственность.

Решение многих национальных проблем в теории и политической практике находится в зависимости от определения нации, ее соотношения с другими общественными явлениями. Широко распространенная идентификация нации и государства ошибочна и приводит к негативным последствиям для многих наций. Построенная на таком понимании система международных отношений исключает возможность осуществления декларируемого права на самоопределение наций, не имеющих своей государственности, что побуждает их бороться за независимость посредством национально-освободительных войн. Результатом такой идентификации является подмена национальной принадлежности гражданской, национального языка государственным, к отрицанию национального сознания, идеологии, патриотизма и других проявлений самобытности зависимых и подневольных наций.

МАНУК АРУТЮНЯН. Национальная идеология в пост тоталитарный период.

В статье рассматриваются тенденции становления, функционирования и развития национальной идеологии в условиях перехода от советского тоталитаризма к демократии. Особое внимание уделяется анализу роли идеологии в становлении и развитии армянской национальной государственности. При этом роль национальной идеологии рассматривается в нескольких направлениях: как фактора, усиливающего идеино-политическое воздействие на процессы социально-экономического, политико-правового и морально-психологического преобразования жизни общества и нации; как тенденции, в определенной меренейтрализующей социальные издержки модернизации общества и способствующей устранению наследий тоталитарного прошлого в психологии и поведении людей, содействующей формированию нового политического менталитета армян.

RAPHAEL SAMSONIAN. Nation and Statehood

The solution of many national problems, both in political theory and practice, depends upon the definition of the term "nation" and its correlation with other social phenomena. The erroneous definition based on the identification of nation and national state has unfavourable consequences for nations lacking their own national statehood. International relations structured on the basis of such identification do not make provisions for such nations to exercise their right to self-determination, which impels them to national-liberation struggles for independence. It is also owing to such definition that in the case of dependent nations nationality is substituted for citizenship, the national language for a state language, and such notions as national consciousness, national ideology, patriotism, etc are repudiated. Therefore, it is necessary to create international political organizations representative of all nations willing to exercise their right to self-determination.

MANOUK HAROUTIUNIAN. National Ideology in Post-totalitarian Period

The article reveals the tendencies in forming, functioning and developing national ideology during the transition period from Soviet totalitarianism to democracy, with particular emphasis made on the investigation of the role ideology is entitled to play in the making and enhancing Armenian national statehood. National ideology is examined in different aspects: on the one hand, it is regarded as a factor which reinforces ideological-political impact on the processes of social-economic, political-juridical and moral-psychological transformations in the life of society and nation; on the other hand, it is considered to be a tendency which to a certain extent neutralizes social consequences of modernization of society and eliminates the layers of the totalitarian past in the psychology and behavior of people conducive to shaping new political mentality of the Armenian nation.

Բովանդակություն

Խմբագրության կողմից.....	3
Ռաֆայել Սամսոնյան. Ազգ եւ պետականություն.....	6
Մանուկ Հարությունյան. Ազգային զաղափարախոսությունը հետամքողատիրական շրջանում.....	25
Համառոտագրություններ.....	43